

նիւթերու: Ինչ որ այդ գրքին մէջ ամէնէն աւելի ուշադրութիւն կը գրաւէ, սիրոյ մը պակասն է: Բայց մի մոռնաք, ազնիւ ներկաներ, որ գրեթէ վանական մթնոլորտին մէջ կ'ապրէր Վարուժան, եւ վանական կեանքը աններող է սիրային արտայայտութիւններու:

Սպասել հարկ է պահ մը: Բանաստեղծը պիտի ազատի կաշկանդումէն, իր դատողութեանն ու դիտողութեանը տէր պիտի ըլլայ, տէր իր ազատութեանը, անմիջապէս պիտի բացուին աղբիւրներուն ակունքը ու *Յեղին սիրտը* (1909) պիտի գայ ցնցել թրքահայ ազատութեան առաջին արբշիռ օրերու մեր հոգին: Հեղինակը Արուեստի երկրորդ հրաշագան հայրենիքէն է որ կը նուիրէ մեզի *Յեղին սիրտը*. պատմական Ֆլանտրայի կ'ակնարկեմ, արդի Պելճիքային:

Հոն որ 17րդ դարուն ապրեցան Ռիպէնսը, Վանտիքը, Ժօտայէնսը եւ ուրիշներ. բոլորն ալ քրիստոնէայ են եւ հեթանոս ու մանաւանդ հեթանոս, բեղուն, երանգաճոխ եւ հանճարային: Ասոնց ազդեցութիւնը անվրէպ է Վարուժանի վրայ՝ երբ կը տեսնենք զինք դարձած հայ եւ օտար հեթանոսական օրերուն եւ աստուածներուն, երբ կը տեսնենք զինք քիչ վերջ՝ անոնց չափ մերկ, ճոխ, գունազէղ:

Բայց նախ քան հեթանոսութեան դարձ մը, Վարուժան հայրենասէր մըն է: *Յեղին սիրտը* տառապանքն է մեր տառապանքին, եղբայրներու արիւնովը կ'արիւնի իր հոգին:

Թշուառ սերունդի մը կը պատկանինք, եւ մեր ապերախտ կեանքը չի կրնար չանդրադառնալ մեր շա՛տ զգայուն գրողներու գործին մէջ: Գիտէ՞ք, Աբովեանը այդ դարդով կը հիծի ու գայն կ'անմահացնէ *Վէրքին* մէջ, նոյնպէս աւելի կամ նուազ նոյն տխրութիւններն ունին Պատկանեան, Ռաֆֆի, Ահարոնեան, Սիամանթօ, Զ. Եսայեան, Ա. Թէոդիկ, Պարթեւեան եւ Վարուժան եւն. ասոնց իւրաքանչիւրին գործը՝ կամ մաս մը այդ գործէն համայնատարած մեր ողբերգութեան մէկ փուլը կը բովանդակէ: